

Թերթ կը զրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱՃՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6

Ամերիկա

2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIEAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ՓԵՏՐ. 2 ՇԱԲԱԹ 1902

ԹԻԻ 239

ԱԶԳԱՅԻՆ

Ի նպատակ մը չիւանդանոցի այս տարի
նուագահանգէս մը պիտի տրուի. Տոմարները
պիտի տպագրուին 1000 հատի չափ, իւրաքան-
չիւրը մէկ ոսկինոց:

— Պոլսոյ Դատաւար Ս. Թագաւոր եկեղե-
ցին պիտի ընդարձակուի. Երեսմեան յատուկ
յանձնախումբ մը կազմուած է հետեւեալ անդա-
յիներէ. Վսեմ. Արքի. Ռոմեան. Տիգրան Բա-
րազանեան և Դաւանիկ Համբարձումեան: Եկեղե-
ցին պիտի ընդարձակուի կամ խորանին տեղը
յառաջ քշելով, և կամ երկու կողմը ընդարձա-
կելով, 90 դառակոսէ մէկը. տեղ. Երեսմեան
ծախուց համար 1500 իրաւ նշխարուած է,
որուն կէսը պիտի նուիրէ Արքի. Եֆ. Ռոմեան,
իսկ մնացեալ մասը՝ թաղեցիներէն պիտի յան-
ձանձուի:

— Սանաուրեան վարժարանի խնամակալու-
թիւնը իր վերջին նստին մէջ խորհեցէ վար-
ժարանը Խարբէրդ փոխադրել Սորսորի Վանքը:

— Ալիանա Ֆրանսէզ 35 ոսկիի տարեկան
գումար մը յատկացուցեր է Դատաւար Ս. Թագա-
ւոր վարժարանին. Ֆրանսերէնի ուսուցման
համար:

— Ստացանք «Գեղունի» երկրորդ պրակը
(Փետրվարի) որ կը պատկանէ ի մէջ այլոց ան-
մահին Հայր Ալիշանի հաւաքած կենսագրութիւ-

նը, զարգարուած անոր երիտասարդութեան,
քահանայութեան, աշխատութեան ժամանակի,
խոր ծերութեան, և ի վերջոյ անկողնոյն մէջ յա-
ւիտեանական քնով հանգչած ատենը առնուած
լուսանկարներով:

Առ ի դիւրութիւն Պուլկարաբնակ ազգայ-
նոց, Զարպանէլեան գրատունն ալ բաժանորդ-
կարձանագրէ, ա՛յ որ պէտք է զրկել կանխիկ 3
ֆր. ոսկի եւ կամ 4 ֆր. ընթացիկ գումար:

— Ասկէ առաջ, ի նպատակ վանայ Երամեան
վարժարանին, յանձնախումբ մը կազմուած էր
Ռոմե. Խորհուրդէն. Այդ յանձնախումբը, Պէր-
պէրեան էֆ. ի 30 ոսկի նպատակը մէկտեղ, մին-
չեւ հիմա 100 ոսկիի չափ գումար մը հանգա-
նակած է:

Թուրք կառավարութեան կողմէ Սօփիայի
քովիւսէր կարգուած է Ալի Ֆէրրուհ պէյ, փո-
խանակ Նէճիպ Մէհմեդի, որ 10.000 զրշ ամ-
սականաւ հանգստեան կոչուած է: Նորընտիր
քովիւսէրը անցեալ չորեքշաբթի իր պաշտօնա-
տեղին հասնելով ներկայացեր է Պուլկարիոյ Ար-
տաքին գործոց նախարարին:

— Զրոյց կը պտտի թէ Պոլսոյ Ռուսական
գեապանատան Ա. թարգման Պ. Մաքսիմօֆ պի-
տի յաջորդէ Սօփիայի Ռուսական ընդհ. հիւպա-
տոս Պ. Պահմէթիէվի:

— Մէկ քանի օրն պիտի ստորագրուի Աւրս-
տրիոյ—Հունգարիոյ և Պուլկարիոյ միջև հիւպա-
տանալոյն դաշնագիր մը, որուն հաւածայն մէկ
քանի փոփոխութիւններ պիտի ըլլան Պուլկարիոյ
մէջ օտարահպատակներու անանկութեան ատեն
կատարուելիք ձեւակերպութեանց մէջ:

—Հրատարակուեցաւ ԲԱՆԱՍԷ՛Ր գրական և գիտական պատկերազարդ օգտաշատ ամսաթերթի Յունիարի պրակը, շահեկան բովանդակութեամբ, Տարեկան բաժնեգրինն է 15 ֆր. կանխիկ, Հասցէն է,

ԳԱՍՄԻԼՃԵԱՆ

112, Պռնզան Ռօշրշռան Բարիգ

Տպարիշ հրատարակուող Պռլկարերէն համանուն
Թերթին մէջ կր կարդանք հետեւեալը .

«Մեր ծանօթ և բաղաբխ բնակիչներէն լուսանկա-
րիչ Տիար Ն. Սիսակեան նոր մեքենայ մը բերել տալով
սկսած է փոքր լուսանկարները մինչև կէս կամ մէկ մէթ-
րի չափ մեծցնել, ախպէս որ տեսնողները կը կարծեն թէ
գծագրութեամբ խոշորցած են: Մենք ականատես ըլլալով
կը վկայենք թէ յորժ գովելի և մաքուր են իւր պատ-
րաստած պատկերները և գիները խիստ դիւրամատչելի
ըլլալով իրեն գիմողները գոհ պիտի մնան: Ուրիշ բաղաբ-
ներէ եղած յանձնարարութիւնք ալ փութով կը կատար-
ուին»:

Հետևեալին հրատարակութիւնը խնդրուած է մեղ-
մէ :

ՅԱՅՏԵՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ. Յեղ. Միութիւնը իրադարձելու նպատակով
և «Հայ. Յեղ. Միութեան Զանձանաժողով» «Ժողովրդ-
գային Միութիւն Հայոց» և «Հայ. Յեղ. Միութեան
Մասնաճիւղ» անուններով կապուած բոլոր մարմինները
նախորոք ընդհանուր համաձայնութեան մը համեմատ վ.
քաղաքի մէջ ընդհանուր պառագամաւորական ժողով գու-
մարելով ի միջի ալլոց, տուաւ հետեւեալ որոշումները
գորս անհրաժեշտ կը տեսնենք յայտարարել ի գիտու-
թիւն ժողովրդեան:

1 ° Վերոյիշեալ անուան տակ կազմուած բոլոր մարմինները պատգմ . ժողովի որոշմամբ , առանձին ա-
նանձին : « Հայ . Եկդ . Միութեան Յանձնախումբ . . . քա-
ղաքից կը կոչուին :

2^o Յաննան/տումբերու նախկին կնիքները Յնվր
15էն սկսեալ կորսնցուցած են իրենց զօրութիւնը որոնց
փոխարէն պատգմ. ժողովի կողմէ պատրաստուած նոր
կնիքներ կը տրուին՝ Տաճարայն նախնեաց որոշման .

3⁹ Տիար Վ. Թորգոմեան ժողովիս ընտրութեամբ

կաղմակիրպսւթիանցս լիաջօր ներկայացուցիչին կարգուե-
լով ունէ բանակցութեան համար պէտք է դիմել իւր
հասցէին՝

Վ. Թորք ամեն

Բոս/ժ Ռէսդանդ

ՊՈԼԿԵԱՐԻ

Βουδουλα

† *Thymus*

Պատգամաւորական Ժողովի

Քաղաքուղիս Նախագահ

Զարմայր Կայծիկ Հայկունի

1977 ԴԱՐՈՒ ԳԻՏԵՐԸ

1800 Ղևմազորութիւն. 1801 Ծաղկի պատուաւստ.
Հիւսելու մեքենայ. 1802 Բեւեռագրերու ընթերցում.
1803 Շոգենաւ. 1805 Լուցկի. 1806 Հիւսիսային
բւեռի խուլարկութիւն. Ափրիկէի խուլարկութիւն.
1812 Արագատիպ մոմոյ. 1816 Օգային կապ. 1820)
Ֆինին. 1822 Հիերոկիֆ (Եփրատական նշանագրերու)
ընթերցումը. 1829 Շոգենաւ. Ինքնութիւն. 1833
Ինքնաշարժ կառք. 1838 Կալվանթութիւն. Սթեր-
էսթեր. Լուսանկար. 1840 Հեռագիր. 1843
Էթերի գործածութիւնը իբրեւ սնզդայացող 1846
Կտրիմեքենայ. 1847 Քլորոֆորմի գործածութիւնը
իբրեւ սնզդայացող. 1851 Ընդծովայ հեռագիր.
Նաւթի գործածութիւն. 1852 Ալքոլականութիւն.
1857 Խմորումներ. 1859 Քոբային. Տարվինակ-
նութիւն. 1865 Շերմի բեպրին և Ֆլաշոն հիւսն-
յութիւնը. 1867 Հակաճիւղութիւն. 1869 Սուէրի
բացում. 1875 Հէրսկրաֆ (Արեւագիր). 1877
Թէլէֆօն. 1878 Միքրոֆօն (Թէլէֆօնի). 1879
Ելէկտրական լապտեր. 1881 Սիւսիսի պատուաւստ.
Ֆօնօկրաֆ. 1885 Կատաղութեան սերմ. 1892
Թէթանոսի սերմ. Տիֆթերի սերմ. 1894 Ժան-
տախտի սերմ. 1895 Ռէնթգենեան X ճառագայթ-
ներ. 1897 Ելէկտրական Լքթոմութիւն. Գեղին տեղի
սերմ. 1898 Անթիլ հեռագիր. Թէլէսքրիթթեր.
Գծագրող հեռագիր Ասթիլէն. Ելէկտրական փուռ.
Միքրոֆօն (Ֆօնօկրաֆի) Կենդանի լուսանկար. Ֆո-
թօթրօթ. Բինէթթրօթ. Սինէմատօկրաֆ. 1899
Արագ հեռագիր. Անթիլ Թէլէֆօն. Թոթախտի դար-
ման. Հեղուկ օդ. 1900 Ընդծովայ պատերազմական
նաւ:

19րդ դարու մէջ կատարուած հսկայ յառաջագիւ
ժութեանց և հրաշալի գիտեցողութեան ցոլացալը աչքի
առաջ ունենալով, մարդս կ'ստիպուի ինքն իրեն հարց
տալ թէ ալ ինչ փառքս է 20րդ և անոր յաջորդող
դարերու մէջ կատարելու կամ գտնելու .

Եւ իսկապէս շատ մեծ բան չէ մնացած լուծելու .
20րդ եւ 21րդ դարերը գուցէ կատարելագործեն օ-
գոյին քաղաքացիականութիւնը, լուծեն կանխագուշակ ե-
րազներու եւ բնագիտման գաղափարը, կեանքը եր-
կարելու եւ անդամանելի նկատուած հիւանդութիւննե-
րու բուժական միջոցները գտնեն, քիմիական սնունդ
պատրաստեն, եւ սոսիալիզմի մեծ խնդիրը կարգադրելով
իրագործեն Աւետարանի խօսքը՝ — «Մի հոգ եւ մի հո-
շիւ»:

Բանասեր

ՏՕՔԲ. Կ. Յ. ՓԱՇՏԵՍԵԱՆ

ՅԵՄԵՐԻՔ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Բարիկ

Հայ հրապարակագիր մը Լատինաց մեծ
բարեկենդանին շաբաթ իրիկունը երգչուհիի մը
ընկերակցութեամբ պարտորահի մը մէջ հը-
պարտօրէն պատած ժամանակ՝ իր բարեծաղիկ
գիմակաւոր բարեկամներէն մին, անոր հրամ-
ցուց մէկ երկու հատ «պօնպօն տը պօնպօն տը-
ման» անուն շաքարեղէն, զորս Պ. հրապարակա-
գիրը կլլելէ կէս ժամ ետքը՝ առանց զգալու
սկսաւ պօնպօն տըմանի, այնպէս որ թէ իր ճաշան
եւ թէ լսողները քահնահաճայն խնդալով քովէն
կը հեռանային. ասոր վրայ Պ. հրապարակագի-
րը պարտաբանէն դուրս նետեց ինքզինքը, չը
մոռնալով սակայն միւսնոյն տանն իրարու ետեւէ
արձակելու իր պանպաղսքմանը:

Բամբաթքա

Անցեալ շաբաթ իրիկուն տիկին Յասմինէի
ամուսինը, ճաշէն վերջը, «ստամոքսի անհան-
գըստութիւն մը կզգամ», մօտալայ գեղարանէն
երթամ քիչ մը ֆառպօնաք առնեմ» բտելով
տունէն մեկնեցաւ. Տիկին Յասմինէ որ ժամա-
նակէ մը ի վեր կը կատկածէր անոր ուղղախօ-
սութեանը մասին, քեշեռիկը ուսերուն վրայ ա-
ռած կամացուկ մը դռնէն դուրս ելաւ եւ հարիւր
քայլի չափ հեռուէն հետեւեցաւ ամուսնոյն որ
ուղղակի Փ... հոթէլը մտնելով եւ գլուհիներու
սրահը ելաւ, ուր սեղանի մը առջեւ նստաւ քո-
վը կանչելով նաեւ երկու երգչուհիներ: Տիկին
Յասմինէ ալ նոյն սրահը մտնելով՝ գաւաթ մը
շուր տարաւ ամուսնոյն սեղանին վրայ դրաւ:

ըսելով. «սիրելի ամուսինս, ֆառպօնաքին հեա
խմելիք շուրգ բերի...»

Թապրօ:

Իրազէկները կըսեն թէ պարոնը ուխտեր է
այլեւս ստանոֆսի անհանգստութիւն չունելու:

Ռիւ Դատիր

Անցեալ գիշեր տան մը մէջ անզգուշու-
թեամբ հրգեհի սկզբնաւորութիւն մը եղաւ,
բայց բարեբաղդաբար դրացիք օգնութեան հաս-
նելու աղէտի մը առաջը առին. այն միջոցին
տանտէրը, ելիկում աղան՝ այն աստիճան շուա-
րեր էր որ շապիքը հանելով մարմնոյն վրայէն
բալթօն հագաւ ու բալթոցին ծածկոցը (էօր-
թիւն) պորնուղի պէս վրան առած փոշոց նետ-
ուեցաւ:

Մարիճա գետ

Վարժարանի տնօրէնը որ իր այլազան ա-
րարքներովը մեծ տնուն հանած է, կամաց կա-
մաց կամոց հոս ալ սկսաւ իր գոյնը դուրս տալ.
(Բոժ. — Ատիկա մեղի համար զարմանալի
չէ, ըստ որում փորձեալն կրկին փորձելը յիմա-
րութիւն է):

Սըթմա բունար

Պաշտօնագործի ուսուցչուհիի մը իր վերջին
սրտի հատորին հետ տեսնուելուն տարեդարձը
պիտի մօնուի մէկ շաբաթէն: Այժմէն մեծ
պատրաստութիւնք կըլլան արժանավայել կեր-
պով հիւրնկալելու համար օտարազգի գուռ դը-
րացիքը, որոնք իրենց յանկարծական այցելու-
թեամբը անցեալ տարի պատրաստ էին զանոնք:

Ուլիցա Չար Պօրիս

Վարժարանիս Բ. բաժանումի ուսանող —
վարժուհին՝ անուանեալն տօրթօն, հետը բերած
ֆեմինիզմը զարեւելով սկսաւ դատախօսել:

ԹԱՏՐՈՒ ՍԱՆՉԲԱՆ

1902 Փետր. 7 Հինգշաբթի Գիշեր ժամ 9

ԹԱՏՐՈՒՄԻ ԵՐԵՎԱՆԻՆԻՍ ԿՈՂՄԵ

ՍԱՍՈՒՆԻ

ԱՊՍՏՈՒԹՅՈՒՆԻ ԹԻԻՆԻ

Ողբերգ. 5 արար 1 պատկեր

Ծիծաղաշարժ Չառեշա մը

Թատերասեր երիտասարդութիւնը շիտոյս է որ Հայ
Ժողովուրդի արգիւնաբեր ներկայութիւնը պիտի վայելէ,
որովհետեւ իր այս ձեռնարկը՝ ըստ հնաւանդ սովորու-
թեան՝ բարեկենդանի օրերուն մէջ թատերասեր Հայ հ-
ստրակութիւնը գէթ մէկ երկու արդայն խաղերէ զուրկ
չի ձգելու գովելի նպատակաւ է:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԻՆ ԲԱՌԱՐԱՆ

Մեղք. — Սինն մարդու սիրած և նոյն
ատեն ատած պատառը:

Բարկութիւն. — Սրտին շանթը:

Համբերութիւն. — Բարկութեան շանթար-
պելը:

Հարբուխ. — Քթին հրաբուխը:

Գրագիտութիւն. — Սնանկացուցիչ արհեստ
մեր մէջ:

Ներբողաբանութիւն. — Մարգահաճոններու
գլխաւոր դրամագլուխը:

Սէր. — Գեղանիի սրտին վարդը, իսկ տ-
գեղի սրտին փուշը, երբ կը սիրէ ու չի սիրը-
ութիւն:

Պատիւ. — Նորելուկ աստուած մը, որուն վը-
րայ պատուաւորն ալ կերպնու, անպատիւն ալ:

Մենամարտութիւն. — Քաղաքա կրթեալ
ազգոց վայրենութեան մնացորդը:

ՄէնՍէ

ԵՐԿՈՒ ԳՈՂԵՐ

Սերպիոյ Թօթքովինը գիւղէն շինական մը
կերթայ Եաճոտնա քաղաքը, տեղւոյն գաւառային
գատարանէն գանձելու համար ժամանակին կը-
տակուած 200 տինարը (լէֆ): Դրամը կը գանձէ
և իրիկունը ուշ ատեն տուն վերադառնալով զայն
կնկանը յանձնելէ ետքը կը պառկի հանգստա-
նալու:

Մէկ երկու ժամ վերջը փակին դրանը վար-
նուելէն՝ գիւղացին կարթննայ և կերթայ դուռը
բանալու. բայց հազիւ թէ բացած էր, ահա չորս
հուժկու ձեռքեր զինքը ամուր մը բռնելով կը-
սեն. «Կամ դրամդ և կամ կեանքդ»: Խեղճ գիւ-
ղացին սարսափահար կ'սկսի դողալ ու կը խոստա-
նայ անմիջապէս դրամները բերել յանձնել եթէ
իր կեանքը խնայեն: Աւազակները կը թողուն
օձիքը խեղճ գիւղացին որ բարձրաձայն կը կան-
չէ իր կինը աղաչելով որ ամբողջ ստակները բե-
րէ իր կեանքը փրկելու համար: Կինը որ փա-
կին մէջ եղած աղմուկը կը լսէր, կը պատասխա-
նէ իր ամուսնոյն. — Սպասէ՛, հիմա կը բերեմ:

Պէտք է գիտնալ թէ, բաղդին մէկ տնօրինու-
թեամբը գիւղացին և իւր կինը նոյն իրիկունը
հիւրընկալած էին երկու ճամբորդ զինուորներ ո-
րոնք իրենց գունդը վերադառնալու համար այդ
գիւղէն կանցնէին՝ քանի մը օրուան արձակուր-
դէ ետքը:

Գիւղացին կինը գողգողով կարթնցնէ եր-
կու զինուորները, աղաչելով անոնց որ ազատեն
ամուսնոյն կեանքը:

Զինուորները անմիջապէս կելլեն և զէնքեր-
նին առած՝ փախը իջնելով կը պուսն աւազակ-
ներուն որ ազատ թողուն գիւղացին: Բայց աւա-
զակները անմիջապէս իրենց զէնքերը կը դար-
ձնեն դէպի զինուորները. այն ատեն այս վեր-
ջիններն ալ առանց ժամանակ կորսնցնելու զէն-
քերնին կը պարպեն և երկու աւազակները գե-
տին կը փռեն:

Ազատուած գիւղացին եղելութիւնը իմացնե-
լու համար կը վազէ գիւղապետին, զոր չի գտ-
նելով՝ տուն կը վերադառնայ: Գիւղացիները ա-
տրճանա չնորո՝ ձայնէն ընդոտտ արթնցած՝ վա-
զեր գիւղացին տունը եկեր էին, ամենքն ալ
հետաքրքրուած՝ ճրագներ կը վառեն սպաննուած
աւազակները տեսնելու համար. զորս գիտար
պիտի ըլլար ճանչնալ եթէ անոնց դէմքերուն
վրայ տեղ տեղ աւրուած չըլլային ծխնելոյղի մու-
րերը՝ որով ծեփուած էին:

Արդ, որոնք կը կարծէք որ ըլլան անոնք,
ազնիւ ընթերցողներ:

— Գիւղապետը ու իր գրագիրը:

Թարգմ.

ԱՅԲՈՒ

Պուրկաղ

Քաակահասներու Վարժարան. — Ամերիկա-
յի ռոտիկանութիւնը լսելով որ Նիւ-Եօքքի մէջ
քաակահասներու վարժարան մը բացուած է, եր-
կար խաղարկութիւններէ վերջ անցեալները կը
յաջողի զայն երևան հանել:

Վարժարանի երկուսու աշակերտք թուով 40,
ռոտիկանութեան տեղեկագրին նայելով ամենքն
ալ իրենց սորվելիք արհեստին շատ յարմար շա-
կոսներ են եղեր: Ռոտիկանութիւնը սոյն վարժա-
րանին հիմնադիրները, ուսուցիչները, աշակերտ-
ները ու տնտեսները կեդրոնական բանալ փո-
խագրեր է, հոն աւելի հանգիստ կերպով կատա-
րելագործելու: համար իրենց մասնագիտու-
թիւնը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ՊԱՏԿԵՐՈՒ ՄԸ

Դրանով իսկ անուսնացողի կեանքի

կիրակի առաւոտ մըն է:

Ձոքանչը. — Հոռոփիկ, աղջիկս, հերիք քու ուրախս, օրդ տի. մուշինայ տառցար:

— Կլորիկ տուտու, տուն սիկարադ քաշէ, հիմակուան դանցայէն չես հասկնար: Ա՛հէն մարդ իրէք լուսնիկը կը քսուին կոր. փառք աստուծու ես մինակ ճերմակը խուլլանմիշ կըլլամ:

— Քա աղջիկս, մեր վախիթը ատանկ քերէճ միւրէճ չի կար. քօքուլու սապօնով ճիտէրնիս կը օրբէինք կըլլար կերթար. աս ինչ խալկութիւն է, սըվաճիթ պէս ծեփէ ու ծեփէ. աղէկ Գրիս աղան պան չըսեր կոր:

— Ի՛նչ հատտ ունի քի բան ըսէ պիտի. ան ձեր վախիթն է եղեր որ, իրիկունը աղան կուգայ կոր տէյի ճարդ պուրդ կեղլաք եղեր. հիմա անանկ եաղմաներ չի կայ, մէյիմ աչքս դարձունեմ նէ կը տեսնայ:

— Շանըն արթուն եավրում. էրկու աչքը քէօննա ան մօտային քի, էկաւ տէ մեր տունն ալ ճանկը անցուց:

Մինչ տիկին Հոռոփիկ եկեղեցի երթալու համար իր բուտրայովը կ'ըզաղէր. ամուսինը՝ Գրիս աղան որ քովի սենեակը կը գտնուէր, առանց նոյն իսկ առաւօտեան սուրճը խմելու, սկսաւ հագուել:

— Հոռոփիկ հանըմ. . . Հոռոփիկ հանըմ, ետխա, խօլլուխ ունիմ. գուզում քեզի զահմէթ է տմա, հազըր ըրէ, ես կուգամ կառնեմ:

— Պօշ տեղը հազըր մըլլար. թէմիդ ետխա չունիս, աս շարթու շամաշըր չըրինք. ետխա յիդ կտոր մը թէպէչիք քսէ կը ճերմկի:

— Բէք թօհաֆ կը խօրաթես, Հոռոփիկ հանըմ, խըր մնլլար ամա, իմ ճիտս սախայի չէթէլէ է քի թէպէչիքով ճերմկի:

— Էյ շատ մի խօրաթեր, գործ ունիմ, եկո սադեղին պօթերս քիշ մը բառլաթմիշ ըրէ:

Ձոքանչը — (Յածէն) Քա եավրում, մարդը լուստուրաճի է. չես ամչնար, հիշ ատանկ խամ թէքլիֆ կըլլայ:

— Տուտու, դուն իրաւ ցնդեր ես. ձեր վախթին մալադօֆ ու չաթիւր պօյամայի վանցան չէ հիմա. դուն սիկառադ ու պուռնութիդ քաշէ տէ իմ գործիս մի խառնուիր:

Այս միջոցին Գրիս աղան ալ ասոնց քով կուգայ:

— Հոռոփիկ հանըմ, արեդ սիրեմ, քաւլաթըս ո՛ւր ես դրած. փնտռելէն խելքս դարձաւ:

— (Յածէն) Սատկելիք եուժուրճախ, սեճըր կէիւր տէ ծառքէդ ազատէի. (Բարձր) Վերի ճամէքեան տալապին վրայի աչքը քաշէ, սօլ թաւաֆը մանտիլներուն քէօշէն է. սափախճա գործ մի տեսնար, կեղլաւ բան մը կը կոտուի:

— Քա աղջիկս դուն գնա շարուխ մը առ բեր, ամօթ է:

— Էօֆ, աման Աստուած, հիմա պիտի մարիմ. սա նայէ, շաշրֆիշ ըրի տէ քիշ մնացինք. Էիս գօլմէթիքը պիտի մոռնայի. սա կայ եա, թիմարխանայէն հիշ ֆարխ չունիմ. Աստուած ոգորմի հէմէն:

Նմանօրինակ խօսակցութիւններով այր և կին պատրաստուելէ վերջը տունէն մեկնելու կըլլան:

Տիկին Հոռոփիկ որ մինչև այն ատեն իր արգուզարգովը զբաղած, զլուխը նոր ասդին կը դարձնէր, դռնից:

— Քա վո՛ւյ, ատ ի՛նչ է. չեղաւ, չեղաւ. դուն ինծի հետ մի գար, ես զառ կերթամ. ատ ի՛նչ ուշախի խըյաֆէթ է. խաչոր վրաս կը խնդան. էրիկս է տէյի կը խպնիմ քովէն քալելու. սա վրան կլոխը նայեցէք, թըպիւր աչճի:

— Հախ ունիս Հոռոփիկ հանըմ, հախ ունիս. քու սիւսիւդ տիւղէնիդ քով ես աչճի չէ. բաշավրաճի պիլէ պիտի նմանիմ:

— Ինծի նայէ, ես առաջ անցնիմ տէ, դուն ետէս եկուր: Օլտու օլաճագ, սա մանթօս իլէն շէմշիյէս ալ ձեռքդ ա՛ռ. Հէմ ինծի նայէ, մանրուք ունիս նէ քանի մը զըշ տուր տէ պէլքի թապախի համար պէտքը կըլլայ:

— Շատ աղէկ հանըմ, ա՛ռ, խղիւլմիշ մըլլար. ինտոր կուգես նէ անանկ կընենք:

— Սա շաբխայիդ ետըը նայէ, սա ելէկիդ լէքէները, բանթալոնիդ բաշաններուն բռթըքաճնեւրը, բօթինիդ ճերմկածութիւնը. աս վրայովըդ հետս գաս տէ ինծի խաղք ընես պիտի զահէր:

— Քա արեւուդ մեռնիմ զաւազս, չըսեմ ըսի ամա՛ էյ չպիտի կրնամ համբերել. դուն հիմա որի՞ն կնիկն ես, Գրիս աղայինը չես, լմնցաւ. էրիդ է, վէսէլամ:

— Թող հետս չի գայ տէ՛ ինչ կուզէ նէ անըլլայ. նայէ ես ամեն ատեն ինտոր աղուր կը հագուիմ: Թող հետս չի գայ. ուշ ալ մնացի, կերթամ կոր. չըլլայ որ ետէս ալ գայ:

— Կուգես ետէսդ գայ կ'ուգես առջեկէդ երթայ, դիտցողը դիտէ քի քու էրիկդ է:

Բայց տիկին Հռոփիկ առանց կարեւորութիւն ապու գռնէն դուրս ելաւ :

Այսպէս ահա կ'անցնին կարգ մը ամուսնական քովէտիներ՝ մանաւանդ անոնք որք գրամօժիտի կռուանը սենին իբր յենարան : Պսակէ առաջ գրպաններու խորը իջնող ոսկիներու կոյտը՝ յետոյ արթննալով իրենց խոր քունէն քսպառնական կծու օձեր կը դառնան, որոց խայթուածքը անձնիւր գիտակցութիւն ունեցող ամուսիններու համար կենդանի գերեզման է արդարեւ :

ՋՈՒԹԱԿ

Կ Ս Մ Ի Թ

ՄՈԳՊԵՏԻՆ ԶԱՌԱՆՑԱՆՔԸ

Խառարիւն մէջ

Ա՛խ Կայծարգել, Կայծարգել,
Է՛ր ձգեցիր զիս անել
Ինչ քունարի խորերին,
Որ չեմ կարող ելանել :

Անյայտ է ինձ այն կէտը,
Թէ ինչպէս իմ ծուռ պոչը
Առիւր տակ քո նրբանին,
Որով չիջաւ իմ կայծը :

Իբրեւ գուշակ սիգայի,
Մարգարէին Դան'ելի,
Բայց կամի՞թք Կայծարգելի՝
Հաւատարմաց զիս հիւլէի :

Իբրեւ մի կայծ փայլեցայ,
Աւաղ, շատ շուտ մարեցայ :

Ա՛խ, դու անգութ Կայծարգել,
Կրցար «Կայծ»-իս բիւֆ ընել,
Թէեւ այլեւ ես կայծ չեմ,
Բայց մի խրոխտ Վաղարշ եմ :

* * *

Ծօ պարոն վրզվրզ, թէ ըլլա՞ս Վաղարշ և կամ թէ
Շաւարշ :

Թէ անցնե՞ս դէմքիդ դունաւոր շղարշ,
Թէ խուզե՞ս քու բաշ, բլլա՞ս հալուամշ,
Այնու միջոց պիտ'կաս մի ծաղրելի վաշ :

Շուտէն

ԿԱՅԾԱԿ

Ջ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

ԱՌԱՋՆՈՐԴՆ ԵՒ ՓՈՔՐԱՆՈՐԸ

Առաջուց ի վեր սովորութիւն եղած է որ վարդապետ կամ եպիսկոպոս երբ տեղ մը առաջնորդ երթան, հետեւնին մէյմէկ շնորհաւոր կուենան : Անգամ մը եպիսկոպոսին մէկը հայհոյիչ փոքրաւորի մը կը հանդիպի, ու թէեւ շատ մը կը խրատէ զայն ունեցած այդ գարշելի ունակութենէն վաղ բերելու համար, բայց տեսնելով որ յորդոր և խրատ անօգուտ են, հետեւալ միջոցին կը դիմէ : Պղտիկ քար մը տալով փոքրաւորին, կը պատուիրէ որ զայն բերնին մէջ պահէ որպէս զի երբ մոռնալով հայհոյել ուզէ, քարը յիշելով լուէ, վտահ հլլալով որ այս կերպով վերջապէս պիտի մոռնայ հայհոյելը :

Փոքրաւորը որ կերելի թէ ինքն ալ այդ գէշ ունակութենէն կ'ուզէր վաղ անցնիլ, կը համա՞կերպի և քարը բերանը պահելով կ'սկսի հայհոյելէ զգուշանալ :

Քիչ մը ժամանակ անցնելէ ետքը օր մը եպիսկոպոս և փոքրաւոր կը պարտաւորին իրենց թեմի գիւղերէն մին այցելել, ուստի ճամբայ կելլեն, բայց յանկարծ անձրեւի մը կը բռնուին : Այն միջոցին կին մը գլուխը պատուհանէն դուրս հանելով կը խնդրէ անոնցմէ որ դրանը առջեւ սպասեն, ու ինքը ներս կը քաշուի : Առաջնորդ և փոքրաւոր կարծելով որ անձրեւէն պատուարուելու համար տիկինը զիրենք տուն կը հրաւիրէ, փողոցին դրանը առջեւ անձրեւին տակ կը սպասեն քառորդ ժամ, աւելի : Միևնոյն կինը դարձեալ գլուխը պատուհանէն դուրս հանելով կ'իմացնէ թէ կրնան ճամբանին շարունակել : Առաջնորդը թէեւ կը բարկանայ, բայց համբերելով՝ զիրենք կեցնելուն պատճառ կը հարցնէ : Կինը կը պատասխանէ. — Դրացիս ըստ որ երբ կ'ուզես աղւոր ու քէքէջի հաւեր ունենալ, սպասէ անձրեւոտ օրի մը ու եթէ գրանդ առջեւէն պատահամբ կրնաս օր մը անցնելու բլլալ՝ կեցուր զայն ու անմիջապէս դնա թխտող հալիդ տակի հաւկիթնեը անգամ մը շոշափէ, ելլելիք վառեակները ամենքն ալ թէքէլի պիտի ըլլան :

Փոքրաւորը զայն օր կը լուէ, ալ չկրնալով համբերել՝ կը պոռայ. — Սրբայտն, քարը բերնէս պիտի հանեմ, մինչեւ անգամ ճաթելս դիտնամ, պիտի հանեմ :

Առ այս սրբազանը կը պատասխանէ. — Հանէ՛ ծօ աղայ, հանէ՛, և Աստուած թողութիւն չընորհեացէ :

Կոմսակ Ի խիւսնոս

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (45)

ՈՐԵՆԵ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

ՊԱՐԾԱՐ-ՄԱՐԾԱՐԵ)

—

Ծովահաններ յարձակած էին իր երկկայմին վրա, և ինք չէր կրնար հոն գտնուել: Աչքը շուրջը պտտացուց տեսնելու համար թե կարելի չէր ժայռէն վեր մագլցիլ, բայց իր նաւաղներէն մէկը որ, միեւնոյն մը տածուամբ ունենալով, փորձած էր վեր ելլալ, ժայռերուն վրայ զլտորած էր. աւելի բան քսան ոտք բարձրութիւնէ:

Միւս նաւաղը, աւազին վրայ կծկուած, իր հընդիկի անհոգութեամբը կը գիտէր այդ տուամը, և Բէյ — Էօ կը ջանար Պ. Լոթերի մարմինն հանել ծովէն, որ արագօրէն կը բարձրանար:

Գալով սըր Արթուրի, ընդհանրապէս այնքան զօրաւոր, սարսափած էր: Իր անզօրութեան զգացումը կը լայրացնէր զինքը: Այն ատեն կրնային հեռանալ այդ ափ մը աւազէն որուն հր պարտէին իրենց կեանքը, երբ օգնութիւն հասնէր: Նախ և առաջ, մարդ պիտի գտնուէր: Յետոյ, շատ ուշ չպիտի գային:

Մակընթացութիւնը չպիտի ծածկէր աւազի այդ նեղ կտորը ուր կը գտնուէին: Կը թուէր իրեն թէ միջոցն երթալով կը նուազէր իր շուրջը:

Իր յուսահատութեամբն համակ, կը համբեր պայթիւնները որք անպարտ իրարու կը յաջորդէին, երբ յանկարծ սկսաւ մեծ աղաղակներ արձկել: Ծովուն վրայ, քիչ հեռուն, նշմարած էր թիակներու կանոնաւոր թախումը ջուրին վրայ:

— Հասէք, հասէք, կը կրկնէր բոլոր ուժովը:

Սըր Արթուր իր աղաղակները միացուց բարեկամին կոչերուն, և շատ չանցած տեսան մակոյկը զոր գուշակած էին թէ հրուանդանը պիտի գտնուէր: Մէջը կը գտնուէին վեց հոգիի չափ մարդ:

Կրկնապատկերին իրենց աղաղակները և շուտով հասկցան թէ ձայններն լսուած են, վասն զի նորիցն կը փորձէին մտնել ժայռերուն ու աւազէ գետնին մէջտեղը: Բերքինս, մինչև մէջքը ջուրը մտած, անոնց կը ցուցունէր վտանգներն ու այն տեղը ուր կըրնային մտնել:

Շնորհիւ իր ցածութեանը, մակոյկը կրցած էր ժայռերէն անցնիլ: Թեւեալի տասն հարուած ալ եւ պիտի կրնար նաւաղեկեալներն առնել:

Մաքսախոյսը կը բաջալիւրէր թիակները և կը հրամայէր սըր Արթուրին օր տանի տիկին Լոթերը, եթէ անիկա չէր կրնար բալել: Մակոյկը երկու գրկաւ միայն հեռու էր անոնցմէ որք անհամբերութեամբ կը սպասէին:

— Յառաջ, բաջերս, յառաջ, կը կրկնէր Էֆրէնի հրամատարը:

Բռնած էր մակոյկին առաջակողմէն՝ ջուրին մէջ պահելու համար գայն, որպէս բի բարեկամները կարենան նստիլ:

— Ա՛հ, դժուար է, դժուար է, օւրեմն, շո՛ւն, գոչեց յանկարծ զէկը վարող մարդը: Ա՛հ, դժուար է որ Սոյ — Պրօտէն աղատել կուզես: Նայէ թէ ի՞նչպէս վերէժ կը լուծէ կարմիր — Մամուկը:

Եւ իր նախատած մարդուն վրայ պարպեց ատրոճանակը զոր մէջքէն հանած էր:

Բայց, իր շտապումին մէջ, մարդասպանը ժամանակ չէր ունեցած թշնամիին նշան առնելու, որ արդէն անմիջապէս ետեւ նետուած էր, ու գնտակը բըսուած էր միայն Բերքինսի գլխուն: Գլխարկն տանելով:

Չու նշան առաւ, և այս անգամ չէր կրնար վրիպիլ, վասն զի անոր վրան ծռած էր գրեթէ բերան բերնի վարնելու համար մաքսախոյսը, երբ յանկարծ մակոյկը, որ կսկսէր զատուիլ աւազէն, ծռեցաւ ու շըրջեցաւ, հակառակ զայն կեցնելու համար թիակներուն ըրած ջանքերուն: Ամեն բան անհետ եղաւ ջուրերուն տակ:

Բէյ — Էսն էր որ ջուրը նետուած էր և այդ ոլորակի շարժումը տուած էր մակոյկին, անոր եղբրքին կառչելով:

Անբացատրելի անձկութեան վայրկեան մը եղաւ այդ. նաւապետը զինուած էր թիակով մը զոր ծովը աւազին վրայ բռնած էր: Չեանամբարձ և աչքը անդունդին վրայ յառած, կը պատրաստուէր խորտակել առաջին ներկայացող գանկը: Սարսափի աղաղակներ արձկնելով, տիկին Լոթեր սըր Արթուրին կը կառչէր եւ անոր շարժումները կը չեղորացնէր: Լուսինը, կարծես լուսաւորելու համար ամենափոքր պարագաներն այս սոսկալի տեսարանին, ծակած էր ամպերը և իր ճառագայթները կողողէին ալիքներուն կատարը: Էֆրէնի կողմը կուր չէր դադարէր:

Երկու երեք գլուխներ միևնոյն ժամանակ հրեցան մակա ժայռերուն մէջտեղ. Մաքսախոյսին բազուկը վար իջաւ. հիծին մը լսուեցաւ որ իսկոյն խղճուեցաւ ջուրեւրուն տակ. Գրեթէ նոյն վայրկենին. երկու մարդեր ցամաք ելան աւազակոյտին շիմացի ծայրը եւ, դեռ բերքինս առնեն չունեցած անոնց ճամբան գոցելու, մինչեւ բաւարժայր նետուեցան անոնք.

Հոն, ժայռի մը կրթնած, պատրաստ կերելային յուսահատ ընդդիմութեան մը Այդ երկու աւազակներէն մէկը Չուն էր.

—Ա՛հ, այս անգամ ձեռքէս չպիտի ազատիս, թշուառական, գոչեց անգլիացիին անօր վրայ ուղղուելով եւ սպառնալով սոսկալի զենքովը որով զինուած էր իր բազուկ.

Դիւային բռնիք մը պտտասխանեց իրեն. Ալիքները բարձրանալով, աւազի մակերեսին մէկ մասը ծածկած էին. Խորունկ, լայն, մութին մէջ անանցանելի պատառուած մը կը բաժնէր Եւրոպացիներն իրենց թշնամիներէն, եւ Լէնկի սպանիչը, մալէեան երկար դաշոյն մը ձեռքը կը պատրաստուէր հրամատարին վրայ խոյաւնալ եթէ անիկա փորձէր բռնիքը կրթալ.

—Անէ՛ծք, մոլտաց Լիու.—Սիուի պաշտպանը, ծռնի ալ մեր գէմն է.

Յանկարծ փայլուն լոյս մը լուսաւորեց հորիզոնը, եւ անգլիացի նաւազը զգաց որ կատաղութենէ պիտի խենդենար: Լամաի խարսխատելիին վրայ տիրող թանձր խաւարին մէջ բոցերը երեւան կը հանէին Էֆէնդի կայմը երկնքին վրայ.

Տիկին Լոթէր ինքզինքն ազատած էր սըր Արթուրի բազուկներէն, եւ աչքերը սեւեռաբեր, իր տեղոյն եւ հրատուոր ձեռքերն երկարած դէպ ի դիւային հրոգիները որք Օքիու՛մ' ա Քլիքքըրուի կայմերուն երկայնութեամբը կը մագլցէին, ազազակներ արձկնով կը հետեւէր աւերիչ տարրին յառաջդիմութեանցը.

—Է՛յ, օտարական չո՛ւն, ոռնաց նախկին մասվաճառը որուն այլանդակ գիմաղծերը վայրագ ուրախութիւն մը կարտայայտէին, հիմակ գիտես թէ ինչի՛ կը նստի Չունի գործերուն խառնուիլը. Հակառակ բուխօտութեանդ՝ Սոլ—Արտուէ պիտի կախուի, եւ բու անիծալ հայրենակիցներդ չպիտի կրնաս Լատրոն տանիլ. Մէկ ժամէն ծովը վեց ոտք պիտի բարձրանայ եւ ամենքն ալ կուլ պիտի արուիք. Ա՛հ, Զուրի—Եղէզի անդամներուն հետ մաքառելու յանդգնութիւնը ունեցար: Տես ի՛նչ եղաւ երկկայմը.

Արդարեւ ծովը կը բարձրանար. նաւակոծեալներ

րուն ապաստանարանը քանի մը ոտք փնցած էր այլ եւս եւ հրացանաձգութիւնը վերսկսած էր Էֆէնդի կողմը որուն կայմը բոցերու մէջ էր.

Յանկարծ մաքսախոյսը, որ չէր ուղեր պտտասխանել մարդասպանին, ուրախութեան ազադակ մը արձակեց. թիտի բազմութիւն հարուածներ, որոց կանոնաւորութիւնը եւրոպական մակոյկ ըլլալը կը յայտնէր, կը լսուէին Լամաի հրուանդանին տշկողմէն, այսինքն Հոնկ Գոնկի նաւահանգստին կողմէն: Չու եւս իմացած էր այս ազմուկը՝ հակառակ ալիքներու շաւաշին, վասն զի սոսկալի յիշոց մը խուսափած էր չորթներէն: (Շար.)

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ Գրուար վէ Հիւրայէլէր. Մալիւմաթը Գէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. Գէննի Էյլէնճէլէր վէ Բէսիմլի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյուէրբէյ նէշր օլունան մէշքիւր քիթապըն պիրինճի ճիւտի խիթամ պուլուպ, իտարէխանէմիլտէ սաթըլմագտա աըր: Թիյ 2 ֆրանք:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին.

Լուսինեան Իշխան — Ճրանդահայ Բառարան, գին 25 ֆր. ոսկեգրամ. Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք.

Թ. Գ. Հինդլեան — Տեւոկան եւ գործնական Գերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն Արշակ Բ. ի եւ անոր Պապ որդւոյն. 2 ոսկէս ֆր. Շէյքսպիրի Համլէթը, ողբերգ. 2 50 ֆր. Թրթռումներ (ոտանաւոր) 25 սնդ.

Հովաստէն " " 25 "

Արտասուլթոր " " 20 "

Թապալարեար Փիլիկ աղբոր հարսնիքը 60 սնդ. Բարեկենդանի անկուտիները. կատակախաղ 1 արար 50 սնդ.

Մահճուպիլէթին միւքեաֆաթը, գօմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Դադանճ դօճա եախօտ Էնֆիլյէճի, գօմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Печатница "Взаимность" — Варна